# ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Դ.Վարուժանի անվան Թիվ 16 հիմնական դպրոց



## Հաստատության առաքելությունն է

*Մրցակցային կրթօջախ ունենալը ներկայիս հրամայականն է, որտեղ պատիվ է կրթվելն ու դաստիարակվելը, դասավանդելն ու գիտության նորարարության դռները բացել մատաղ սերնդի առջև*

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 2024-2029թթ.

ՎԱՆԱՁՈՐ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
1.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
1.2 ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
2. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
2.1 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
2.2 ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ
ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
3. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
4. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
4.1 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
6. ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ
8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ
9. ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
10. ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության լավագույն դարբնոցը դպրոցն է: Այն մատաղ սերնդին կերտելու, դաստիարակելու և քաղաքակիրթ դարձնելու հիմնական ստեղծագործարանն է: Դպրոցը պետության հենքն է: Նրա առաքելությունն ավելի մեծ է, քան կարելի է պատկերացնել: Այն պետք է լինի հենման կետ, որը կնպաստի երեխայի ինքնաբացահայտմանը, դրսևորմանն ու կայացմանը: Դպրոցի պատասխանատվությունն է կրթել անհատ և նպաստել ընտանիք–համայնք, պետություն-հասարակություն կապի ամրապնդմանը: Այսինքն, կրթությունը անհատի, հասարակության և պետության ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը պահպանելու, հարստացնելու և սերունդներին փոխանցելու գործին: Մեր երկրում դպրոցի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Իսկ այս ամենի իրականացման համար դպրոցը պետք է ունենա նպաստավոր պայմաններ և հնարավորություններ, որոնք կնպաստեն 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայող քաղաքացի ձևավորելու ազգանվեր գործին: Դպրոցի զարգացման ծրագիրն էլ քայլ առ քայլ, աստիճանական և կոնկրետ ուղղորդումներով պետք է նպաստի վերոնշյալ գաղափարախոսության իրականացմանը:

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի №16 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2024–2029թթ. ծրագիրի հիմքում (այսուհետ՝ Ծրագիր) ընկած է ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Լեզվի մասին» ՀՀ օրենքը, Կրթակարգ, «ՊՈԱԿ-ի մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվական զարգացման պետական ծրագիրը» և Հանրակրթության պետական չափորոշիչը:

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա, նախատեսված ժամանակահատվածի համար, պլանավորվում է դպրոցի աշխատանքների կազմակերպումը և այն միջոցառումների իրականացումը, որով ապահովվելու է կրթօջախի առաջիկա 5 տարվա գործունեությունը և զարգացման հնարավորությունների ընդլայնումը: Ծրագիրը նպատակաուղղված է դպրոցի

ատիճանական զարգացման իրականացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը, որոնք ուղղակիորեն բխում են դպրոցի գործունեությունից և շահերից:

Ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 35-Ն հրամանով հաստատված ՙՊետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի ձևաչափը և դրա կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները՚, ինչպես նաև դպրոցում առկա ռեսուրսներն ու հնարավորությունները, հիմնախնդիրները, դպրոցի աշխարհագրական դիրքն ու տեղանքի առանձնահատկությունները, մանկավարժական կոլեկտիվի և աշակերտների ձեռքբերումները, աշակերտական և ծնողական խորհուրդների մոտեցումները, ապահովվել է մասնակցային գործելաոճը:

Զարգացման ծրագրի առանցքային բաղադրիչներն են՝ *առկա իրավիճակի նկարագրությունը և հաստատության գործունեությունը, դպրոցի հիմնախնդիրների վերլուծությունը, առավելությունների հիմնավորումը, սահմանվել են նպատակները և խնդիրները, նախանշվել են իրագործելիության ժամկետներն ու պատասխանատուները, ծրագրի նպատակներին հասնելուն ուղղված միջոցառումները, դրանց իրականացման խոչընդոտները, ծրագրի իրագործելիության գնահատման ու վերահսկողության ցուցիչները:*

# 1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

| | |
|---|---|
| **Հաստատության անվանումը** | ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Դանիել Վարուժանի անվան № 16 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| **Հաստատության հասցեն** | ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, 4-րդ թաղամաս, Զեյթունի փողոց 5 |
| **Հեռախոսահամար** | +374 322 619 81 |
| **Էլեկտրոնային հասցեն** | http://vanadzor16.schoolsite.am/ |
| **Իրավաբանական կարգավիճակը** | «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Դ.Վարուժանի անվան №16 դպրոց» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական երկու՝ տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է |
| **Հիմնադիրը** | Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր): |
| **Պետական գրանցումը** | ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 08/09/2003թ, գրանցման թիվ՝ 222.210.00191 |
| **Լիցենզիա** | ՀՀ կրթության և գիտության նախարարի 2020թ. սեպտեմբերի 24-ի թիվ 1292-Ա/2 հրամանով տրվել է կրթական գործունեության լիցենզիա՝<br>տարրական ընդհանուր(1-ին աստիճանի լիցենզիա №0181)–405տեղ<br>հիմնական ընդհանուր(2-րդ աստիճանի լիցենզիա №0175 )–500տեղ |

## Դպրոցի հիմնադրման պատմություն

Տակավին երիտասարդ դպրոցն ունի կենսագրական հարուստ պատմություն: Այն հիմնադրվել է Սպիտակի երկրաշարժից հետո Վանաձորի նորաստեղծ Տարոն-4 թաղամասում, 2003թ.-ին Վանաձորի թիվ 16 և 29 միջնակարգ դպրոցների վերամիավորման արդյունքում: Համո Սահյանի անունը կրող թիվ 29 միջնակարգ դպրոցի 1-ին երկհարկանի մասնաշենքը կառուցվել էր 1993 թվականին (որը համալրվեց 322 աշակերտներով, 17 մեծ դասասենյակներով, 2 ընդարձակ մարզադահլիճներով, դպրոցին կից բացօթյա մարզահամալիրով): 2-րդ մասնաշենքը կառուցվել է 1996թ-ին՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի և ֆրանսահայ բարերարներ երջանկահիշատակ Արթին Չինգիրյանի և Անդրանիկ Նուրյանի շնորհիվ: Վերամիավորումից հետո դպրոցն անվանակոչվել է Դանիել Վարուժանի անունով՝ կրելով հերթական 16 համարը:

ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. հուլիսի 7-ի N769-Ա/Ք հրամանով դպրոցը դարձել է հիմնական: Նոր խմբագրությամբ դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Կառավարության 2017թ-ի սեպտեմբերի 14-ի թիվ 801–Ն և ՀՀ Լոռու մարզպետի 2022թ. մայիսի 30-ի թիվ 287–Ա որոշումների հիման վրա:

## Հաստատության նկարագրությունը

Դպրոցը շահագործման է հանձնվել է 1993թ.-ից: Դպրոցի ամբողջ տարածքը կազմում է 7950քմ, որից շենքային՝ 7231.2քմ: Դպրոցին կից առկա է մաքրվող տարածք (բակ) -28,408 քմ մակերեսով: Դպրոցը տեղակայված է մարզկենտրոնի նորակառույց թաղամասի կենտրոնական հատվածի գլխավոր փողոցի հետնատարածքում և վտանգավոր չէ սովորողների համար: Արտակարգ իրավիճակների ժամանակ դեպի դպրոց մուտքը հասանելի է տարբեր չափի մեքենաների համար: Դպրոցն ունի 5 մասնաշենք, որոնք վերջին տարիներին չեն վերանորոգվել:

| Մասնաշենք | Մակերեսը (քառ.մետր) |
|---|---|
| 1-ին | 541.8 |
| 2-րդ | 541.8 |
| 3-րդ | 543.9 |
| 4-րդ | 543.9 |
| 5-րդ | 470.9 |

Դպրոցի մասնաշենքերը երկհարկանի են, տեսակը՝ տիպային: Առկա է 2,410 քմ մեծությամբ նկուղ, որի 900 քմ կարող է օգտագործվել որպես թաքստոց, մնացած մասը ապամոնտաժման ենթակա է, սակայն լցված է ոչ պիտանի թափոններով: Պետբյուջեի և դպրոցի խնայողությունների միջոցով մասնակի վերանորոգվել են տանիքը, պատուհանները, դռները, հատակը: Մասնաշենքերի մուտքերի-ելքերի քանակը 13-ն են, որոնց դռների բացման ուղղությունը դեպի դուրս են:

Դպրոցը ջեռուցվում է անհատական ջեռուցման համակարգով, որն ապահովում է միայն դասասենյակների, մի քանի կաբինետների և լաբորատորիաների, ուսուցչանոցի, գրադարանի և մարզադահլիճներից 1-ի տաքացումը:

Միջանցքների պատերի մի մասն է կոսմետիկ վերանորոգված, հատակները ամբողջությամբ

քարապատ է և չեն ջեռուցվում։

Հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին: Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր, ապահովված է կապի միջոցով, սակայն չունի արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգ՝ «Շչակ»: Ազդարարումն իրականացվում է ուսումնական զանգի տեխնիկական միջոցներով:

Դպրոցի շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների ուսուցումն ապահովող պայմաններին, ունի անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններ (թեքահարթակ)՝ գլխավոր մուտքի և առաջին հարկի սանհանգույցի մոտ։

Դպրոցն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային, անվտանգության լրակազմով, տանիքը մասնակի պատված է հրակայուն նյութերով: Միջանցքներում տեղադրված են հակահրդեհային միջոցներ՝ կրակմարիչներ (19 հատ) և 1 վահանակ։ Առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան, որը փակցված է նախասրահում, բոլոր հարկերում և դասասենյակներում՝ համապատասխան գունային ցուցասլաքներով։ Դպրոցում առկա է հին անվտանգության տեսահամակարգ։

Դպրոցի 16 սանհանգույցներից (ընդհանուր մակերեսը 316 քմ) վերանորոգված չեն միայն 5-ը։ Դպրոցը էլեկտրաֆիկացված է, գազաֆիկացված է, ապահովված է շուրջօրյա ջրամատակարարումով: Գործում է կոյուղու համակարգը։

Դպրոցի տարածքում առկա է ինտերնետ հասանելիություն և հեռախոսակապ։

Դպրոցի ենթակառուցվածքները բավարար են հաստատության լիակատար գործունեության իրականացման համար։ Դպրոցն աշխատում է միահերթ, 5-օրյա աշխատանքային ռեժիմով:

2023-2024թթ. ուստարում դպրոցը համալրված է 18 դասասենյակով, առարկայական 6 կաբինետով /ՍՄԱՐԹ, ռազմագիտության՝ զենքի պահոցով, տեխնոլոգիայի, շախմատի, օտար լեզվի, ռուսաց լեզվի/, գրադարան-ընթերցասրահով, առկա են 3 լաբորատորիա (որից մեկը՝ ԱՐՄԱԹ ինժեներական), 2 մարզադահլիճ՝ մեկը վերանորոգված, 2 մարզահրապարակ, հանդիսությունների (նիստերի) դահլիճ, ուսուցչանոց, բուժկետ, հավելյալ սենյակներ (սոց մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների համար), ճաշարան՝ նախատեսված սննդի համար պահեստով:

Դպրոցում սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:

Հաստատության գործունեությունը լիովին համապատասխանում է ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին:

Դպրոցը նախատեսված է 905 աշակերտի համար: Սովորողների անվտանգ կենսագործունեությունը ապահովելու, արտակարգ և վտանգավոր իրավիճակներում ազատ տեղաշարժվելու նպատակով մեկ սովորողին հատկացվում է 2 քմ մակերես:

| ՀՀ | Ենթակառուցվածք | Քանակը | Չափը | Հագեցվածության աստիճանը | Վիճակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Դասասենյակներ | 18 | Ընդամենը՝ 1,048քմ<br><br>34.1քմ,<br>41.1քմ,<br>41.1քմ,<br>56.1քմ,<br>56.5քմ,<br>57.1քմ,<br>57.6քմ,<br>57.9քմ,<br>58քմ,<br>58.1քմ,<br>58.6քմ,<br>59.2քմ,<br>59.3քմ,<br>75քմ,<br>75.5քմ,<br>79.3քմ,<br>97.3քմ,<br>98.4քմ | կահավորված աշակերտական սեղաններով, նստարաններով, աթոռներով, ուսուցչի սեղանով, մասնակի շերտավարագույրների առկայությամբ | Վերանորոգված՝ միջին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | Բուժկետ | 1 | 39.7քմ | միջին հագեցվածության | կոսմետիկ վերանորոգված |
| 3. | Առարկայական կաբինետ | 5<br>(սմարթ<br>ռուսաց լ.<br>անգլերեն<br>ՆԶՊ<br>տեխնոլոգիա<br>շախմատ) | 17.8քմ<br>38.2քմ<br>34.4քմ<br>58.8քմ<br>16.4քմ<br>58.8քմ | հագեցված<br>հագեցված<br>հագեցված<br>միջին հագեցվածութ.<br>միջին հագեցվածութ.<br>թույլ հագեցվածութ. | Վերանորոգված<br>Վերանորոգված<br>Վերանորոգված<br>Չվերանորոգված<br>Չվերանորոգված<br>Չվերանորոգված |
| 4. | Լաբորատորիա | 4<br>ԱՐՄԱԹ<br>ֆիզիկա<br>քիմիա<br>կենսաբ. | 256.0քմ | հագեցված<br>թույլ հագեցված<br>թույլ հագեցված<br>թույլ հագեցված | Վերանորոգված<br>Չվերանորոգված<br>Չվերանորոգված<br>Չվերանորոգված |
| 5. | Ուսուցչանոց | 1 | 37.4քմ | նոր գույքը առկա է | Չվերանորոգված |
| 6. | Տնօրենի կաբինետ<br>Հաշվապահի կաբինետ | 1<br>1 | 38քմ<br>37,4քմ | հագեցված<br>հագեցված | Վերանորոգված<br>Չվերանորոգված |
| 7. | Ճաշարան | 1 | 253.5քմ | հագեցված | Վերանորոգված |
| 8. | Սպորտդահլիճ | 2 | Ցուր.-ը՝<br>343.7քմ | միջին հագեցվածության | 1-ը՝<br>վերանորոգված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9. | Հանդերձարան | 4 | 100.8քմ | 2 մարզադահլիճում օդափոխման միջոցներ առկա են | 2-ը վերանորոգված |
| 10. | Հանդիսությունների դահլիճ(180 տեղանոց) | 1 | 267.1քմ | հագեցված | Վերանորոգումը ավարտման փուլում է |
| 11. | Գրադարան (ընթերցասրահով և գրապահոցով) | 1 | 117.8քմ | դասագրքեր, մեթոդականներ, գեղարվեստական գրքեր | Վերանորոգված |
| 12. | Մասնագետների սենյակ | 2 | 33.3քմ | միջին հագեցվածության | Վերանորոգված |
| 13. | ՆԶՊ<br>զենքի սենյակ | 1 | 75.0քմ<br>2.0քմ | միջին հագեցվածության, ապահովված է անվտանգության համակարգով | Չվերանորոգված, չի ջեռուցվում |

## 1.2 ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հաստատության նյութատեխնիկական բազան առաջնային անհրաժեշտության օգտագործման համար կարելի է համարել բավարար, սակայն հետևելով ժամանակակից պահանջների արագընթաց փոփոխմանը, անհրաժեշտություն կա աստիճանական ավելացման և թարմացման:

**ՍՄԱՐԹ դասասենյակը** կառուցվել է 2017թ.-ին Լոռու մարզպետարանի նախաձեռնությամբ, պետբյուջեի և դպրոցի տնտեսված միջոցների հաշվին, վերանորոգված և կահավորված է, հագեցած է անհրաժեշտ հետևյալ սարքավորումներով.

| N | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|
| 1 | համակարգիչ | 9 |
| 2 | համակարգիչ դյուրակիր | 2 |
| 3 | էլեկտրոնային գրատախտակ | 1 |
| 4 | պրոյեկտոր | 2 |
| 5 | բազմաֆունկցիոնալ տպիչ | 4 |
| 6 | տեսախցիկ | 1 |
| 7 | ցանցային սարք | 1 |
| 8 | հոսանքի կայունացուցիչ | 3 |
| 9 | շարժական սեղան | 7 |
| 10 | աշակերտական սեղան | 12 |
| 11 | գրասենյակային աթոռ | 30 |

**ԱՐՄԱԹ լաբորատորիան** կառուցվել է 2019թ.-ին պետբյուջեի ֆինանսավորմամբ, հագեցած ժամանակակից սարքավորումներով և վերանորոգված է.

| N | ԱՆՎԱՆՈՒՄ | Քանակ |
|---|---|---|
| 1 | «Այգեստան Զ» մինի համակարգիչ, հավաքածու (մոնիտոր, ստեղնաշար, մկնիկ, երկարացման լար, ծրագրային ապահովում)՝ | 4 |
| 2 | Համակարգիչ (մոնիտոր, ստեղնաշար, մկնիկ, երկարացման լար) | 1 |
| 3 | Եռաչափ տպիչ | 1 |
| 4 | CNC շաղափային հաստոց (հավաքածու) | 1 |
| 5 | Ռոբոտաշինության ուսումնական և ավտոմատացմանհավաքածուներ | 1 |

**Գրադարանը** հիմնովին վերանորոգված է, առկա են անհրաժեշտ գույք և լոկալ ջեռուցման համակարգ: Հագեցած է համակարգիչներով (10 հատ), որոնց հասանելի է ինտերնետը կապը, 4469 դասագրքով և ՈՒՁՀ-ով, գեղարվեստական 4489 գրքով.

| Տարեթիվ | Դասագրքերի ֆոնդը (հատ) | |
|---|---|---|
| | միջին օղակ | տարրական օղակ |
| 2020-2021թթ. | 3211 | 463 |
| 2021-2022 թթ | 3537 | 655 |
| 2022-2023 թթ | 3737 | 730 |
| 2023-2024 թթ | 3739 | 730 |

**Մարզադահլիճներից** մեկը կից 2 հանդերձարանով, 2 սանհանգույցով վերանորոգվել է 2017թ-ին, այն նաև ջեռուցվում է, հագեցված է մարզական գույքով: Մյուս մարզադահլիճի վերանորոգման և մարզագույքի ձեռքբերման անհրաժեշտություն կա:

**Բուժկետը** համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին, վերանորոգված է, առկա է առաջին բուժօգնության միջոցներ և դեղեր, ապահովված է գույքով:

**Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաները, աղջիկների տեխնոլոգիայի կաբինետը** ունեն վերանորոգման, ջեռուցման անցկացման կարիք (բացի կենսաբանության լաբորատորիայի), առկա են լաբորատոր տարրական փորձեր ցուցադրելու սարքեր,

մանրադիտակ, ադսորբցիոն սարք, որոշ դիտակտիկ նյութեր։ Հագեցված չեն ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով։

**Ճաշարան** վերանորոգված է։ Գործում է սանիտարահիգենիկ նորմերին համապատասխան։ Դպրոցն իրականացնում է «Դպրոցական սնունդ» ծրագիրը, որից օգտվում են 223 սովորող։

## ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • մեծ և լուսավոր շենքային պայմաններ<br>• ստանդարտ սենյակներ,ընդարձակ միջանցքներ<br>• ջեռուցվող դասասենյակներ, լաբորատորիաներ<br>• կահավորված և վերանորոգված ՍՄԱՐԹ դասասենյակ և ԱՐՄԱԹ լաբորատորիա<br>• ժամանակակից հագեցած գրադարան-ընթերցասահ<br>•վերանորոգված և կահավորված ճաշարան (սանհանգույցով)<br>• շուրջօրյա ջրամատակարարում<br>•գազաֆիկացված և էլեկտրաֆիկացված մասնաշենքեր<br>•ընդարձակ բակային տարածք | • չվերանորոգված մասնաշենքեր<br>•մասնակի վերանորոգված տանիք, հատակ, միջանցքներ<br>•դեռևս հին պատուհանների, դռների առկայություն<br>•որոշ կաբինետների անմխիթար վիճակ<br>•միջանցքների ջեռուցման բացակայություն<br>•դպրոցի տարածքն առանձնացված չէ ցանկապատով, բակը դեռևս ունի կանաչապատելու և ասֆալտապատելու կարիք։<br>•դպրոցն ունի տեսախցիկների և գիշերային լուսավորության կարիք։<br>•դպրոցի նկուղն ունի վերանորոգման կարիք։<br>•դպրոցում իրականացվում է ներառական կրթություն, սակայն չկան շենքային համապատասխան հարմարեցումներ<br>•ՆԶՊ, տեխնոլոգիայի և շախմատի կաբինետների անմխիթար վիճակ<br>•1 մարզադահլիճի և դրան կից 2 հանդերձարանի, 2 սանհանգույցի անմխիթար վիճակ<br>•թեքահարթակների քիչ քանակ անխնամ բակ,<br>•բացօթյա խաղահրապարակի բացակայություն |

| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՌԻՍԿԵՐ |
|---|---|
| Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքերում (վարձակալությամբ տարածքներ, վճարովի խմբակներ) | ●Տարածքի մեծություն<br>●Ֆինանսական միջոցների սակավություն, բարեգործական միջոցների բացակայություն<br>●Ֆորսմաժորային իրավիճակներ, բնական աղետներ<br>ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>●Համատեղ աշխատանքների, հետևողական և մշակված գործողությունների իրականացում<br>●Դպրոցի շրջանավարտների և շահագրգիռ մարդկանց ներգրավում: |
| ՆՊԱՏԱԿ | ●դպրոցի շենքային պայմանների և հարակից տարածքի բարելավում<br>●դասասենյակների,կաբինետների կահավորում |
| ԽՆԴԻՐ | ● տանիքի վերանորոգում<br>●դասասենյակների,առարկայականկաբինետների և լաբորատորիաների վերանորոգում<br>●միջանցքների վերանորոգում և ջեռուցման ապահովում<br>●մարզադահլիճի վերանորոգում<br>●բացօթյա խաղահրապարակի կառուցում |
| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ●Ֆինանսական միջոցների ձեռքբերում<br>●Շահագրգիռ անձանց և կազմակերպությունների ներգրավում |
| ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ●Տնօրեն<br>●Վարչատնտեսական մասի համակարգող |
| ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | a. 2023-2028թթ. |
| | ● բարեկեցիկ և ապահով շենքային պայմանների ստեղծում<br>●ԿԱՊԿ սովորողների համար հարմարեցումների |

| | |
|---|---|
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | ապահովում<br>●ջեռուցման ապահովում<br>● ժամանակակից դասի պահանջներին համապատասխան միջավայրի ստեղծում |
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | Դպրոցի տանիքի վերանորոգման աշխատանքները<br>●լիովին կատարված են /2/<br>● կատարված են մասամբ/1/<br>●չեն կատարվել/0/<br>Դասասենյակների, կաբինետների, մարզադահլիճի վերանորոգումները<br>●լիովին կատարված են/2/<br>● կատարված են մասամբ/1/<br>●չեն կատարվել/0/<br>Միջանցքների վերանորոգման և ջեռուցման աշխատանքները<br>●լիովին կատարված են/2<br>● կատարված են մասամբ/1/<br>●չեն կատարվել/0/<br>Բացօթյա խաղահրապարակի աշխատանքներն<br>●ընթացքի մեջ են/2/<br>● սկսված են/1/<br>●չեն սկսվել/0/ |

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| ● հագեցած ՍՄԱՐԹ և ԱՐՄԱԹ լաբորատորիաներ<br>● ժամանակակից գրադարան-ընթերցասրահ<br>● վերանորոգված հանդիսությունների դահլիճ<br>●ԿԱՊԿ սովորողների համար որոշակի կահավորված սենյակներ<br>●կահավորված և անհրաժեշտ կենցաղային սարքավորումներով հագեցած ճաշարան | ●ուսուցչանոցի, դասարանների, կաբինետների հին գույքի առկայություն և քիչ քանակությամբ համակարգիչներ և այլ անհրաժեշտ տեխնիկա<br>●մարզագույքի պակաս<br>●կաբինետների դիդակտիկ նյութերի պակաս<br>●լաբորատորիաներում հին գույքի առկայություն և լաբորատոր անհրաժեշտ նյութերի պակաս<br>●միջանցքները կահավորված չեն<br>●հին էլեկտրական հաղորդալարերի և լամպերի առկայություն<br>●որոշ մասնաշենքերում ինտերնետ կապի անհասանելիություն<br>●հին անվտանգության համակարգ<br>●ԿԱՊԿ սովորողների համար դիդակտիկ պարագաների ձեռքբերում |
| **ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **ՌԻՍԿԵՐ** |
| ● սեփական բյուջեի ճիշտ պլանավորում<br>● լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռբերում (վարձակալությամբ տարածքներ, վճարովի խմբակներ) | ●Ֆինանսական միջոցների սակավություն<br>օրենսդրական դաշտի փոփոխություններ<br>*ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ*<br>●Ֆինանսական միջոցների ձեռքբերում /մասնակցություն կրթական տարբեր ծրագրերի, հովանավորների, բարեգործների կողմից ներդրումների իրականացում/ |

| | |
|---|---|
| ՆՊԱՏԱԿ | ●արդի պահանջներին համապատասխան դասապրոցեսի իրականացում<br>●անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ապահովում՝ |
| ԽՆԴԻՐ | ●Անհրաժեշտ նյութական բազայի ապահովում<br>●համակարգիչների, նոր ժամանակակից սարքավորումների ձեռքբերում<br>● համակարգչային կաբինետի ստեղծում<br>● բնագիտական առարկաների լաբորատորիաների կահավորում<br>●անհրաժեշտ մարզագույքի ձեռքբերում<br>●ԿԱՊԿ սովորողների համար անհրաժեշտ դիդակտիկ պարագաների ձեռքբերում |
| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Ուսուցիչներին մեթոդապես վերազինել ՝<br>●մասնակից դարձնել վերապատրաստումներին<br>●կատարել փորձի փոխանակում<br>●համագործակցել ուսումնական և կրթական այլ կազմակերպությունների հետ |
| ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ●Տնօրեն<br>●Վարչատնտեսական մասի համակարգող<br>●Ուսուցիչներ |
| ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | 2024-2029թթ. |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | ●Դպրոցի վերազինում ժամանակակից տեխնիկայով<br>●Սովորողների մոտիվացիայի խթանում<br>●Ուսուցիչների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացում |
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | Բնագիտական առարկաների լաբորատորիաների կահավորման աշխատանքները՝<br>● կատարված են /2/<br>● կատարված են մասամբ /1/ |

| | |
|---|---|
| | ●չեն կատարվել /0/<br>Համակարգիչներով և անհրաժեշտ այլ տեխնիկայով համալրելու աշխատանքները՝<br>● բավականին կատարված են /2/<br>● կատարված են մասնակի /1/<br>●չեն կատարվել /0/<br>Ֆիզկուլտուրայի դասերին ձեռքբերված մարզագույքը<br>●բավարար է/2/<br>●թերի է /1/<br>● ձեռքբերված չէ |

## Կրթության որակական չափանիշները

- Դպրոցում ուսուցանվում է 3 օտար լեզու՝ ռուսերեն, անգլերեն և գերմաներեն:
- Դպրոցը հանդիսանում է «ՀՀ գյուղական համայնքներում բացակա ուսուցիչների խնդրի լուծումը էլեկտրոնային դասավանդման միջոցով» ծրագրի շրջանակներում մենթոր դպրոց:
- Դպրոցը երեք անգամ ճանաչվել է եվրոպական դպրոցների համագործակցության eTwinning դպրոց:

## 2.1 Աշակերտների վերբերյալ տեղեկատվություն

Աշակերտների թիվը՝ (2023-2024 ուստարվա հունվարի 1-ի դրությամբ) - 514, որից՝

տարրական դպրոցում՝ 8 դասարան - 223աշակերտ

միջին դպրոցում՝ 10 դասարան - 291աշակերտ

Դպրոցում 2014թ.-ից իրականացվում է ներառական կրթություն: Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է զարգացման ծրագրում: Առկա է ԿԱՊԿ 30 սովորող, որից՝ 2 ծանր, 1 խորը, 20 միջին և 7 թեթև խանգարումներով:

**Տեղեկատվություն աշակերտների թվի վերաբերյալ վերջին 3 տարիների ընթացքում**

| Տարեթիվ | Աշակերտների քանակ | որից ԿԱՊԿ սովորողներ |
|---|---|---|
| **2020-2021** | **455** | **31** |
| **2021-2022** | **473** | **31** |
| **2022-2023** | **488** | **30** |

**Տեղեկատվություն աշակերտների առաջադիմության վերաբերյալ վերջին երեք տարիների ընթացքում**

| Ուս.տարի | Սովորողների թիվը | Գերազանց | Լավ | Անբավարար |
|---|---|---|---|---|
| ***1*** | ***2*** | ***3*** | ***4*** | ***5*** |
| **2020-2021** | 393 | 95 | 93 | 6 |
| **2021-2022** | 473 | 92 | 120 | 2 |
| **2022-2023** | 488 | 68 | 124 | 17 |

**Տեղեկատվություն մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում աշակերտների մասնակցության վերաբերյալ**

| Ցուցանիշ | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|
| Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների տոկոսը սովորողների ընդհանուր թվի համեմատ | 1.2% | 4% | 4.7% |
| Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ | - | - | - |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների տոկոսը սովորողների ընդհանուր թվի համեմատ | - | - | - |
| Միջազգային առարկայական օլիմպիադաների մասնակիցների տոկոսը սովորողների ընդհանուր թվի համեմատ | - | - | - |
| Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ | 0.2% | 8% | 13% |
| Միջազգային մարզական ու մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | 0.2% | 0.2% | 0.6% |

Այսօր դպրոցը քայլում է ժամանակի պահանջներին համահունչ. աշակերտները ակտիվորեն մասնակցում են առարկայական օլիմպիադաներին, համահայկական և համազգային մրցույթներին: Ճիշտ է դեռևս առարկայական օլիմպիադաներին զգալի արդյունքներ չեն գրանցվում, սակայն աշակերտների և ուսուցիչների մոտ նպատակաուղղվածությունն առկա է: 2024թ. հունվարի դրությամբ արդեն արձանագրել ենք որոշակի առաջընթաց, քանի որ առարկայական օլիմպիադաների մարզային փուլ են անցել 5 աշակերտներ՝ թվով 7 տարբեր առարկաներից:

Դպրոցը ստեղծում է բոլոր հնարավոր միջոցները սովորողներին տարաբնույթ դպրոցական և արտադպրոցական միջոցառումներին, մրցույթներին ու մրցաշարերին ներգրավելու և հաջողություններ արձանագրելու ուղղությամբ: Դպրոցի մանկավարժական խորհուրդը

հետևողական է սովորողների ցանկացած ձեռքբերումների և հաջողությունների նկատմամբ, որոնք մշտապես արժանանում են տարբեր խրախուսանքների:

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| ✓ Աշակերտների թվի ավելացում<br>✓ Սովորողների մեծ մասն ակտիվորեն ներգրավված են ուսումնական գործընթացում:<br>✓ Աշակերտները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ներդպրոցական և արտադպրոցական բազմաբնույթ միջոցառումներին:<br>✓ ԿԱՊԿ սովորողները ընդգրկված են ուսումնական գործընթացում:<br>✓ Բոլոր սովորողներն ապահովված են դասագրքերով:<br>✓ Մի շարք հաջողությունների ձեռքբերում տարաբնույթ միջոցառումներին:<br><br>ՆՊԱՏԱԿ | ✓ Աշակերտների մի մասի մոտ բացակայում է կրթության նկատմամբ մոտիվացիան:<br>✓ Առաջադիմության արդյունքները ցածր են:<br>✓ Առարկայական օլիմպիադաներին ցուցաբերում են ցածր ցուցանիշներ :<br>✓ Դպրոցում շատ են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ:<br>✓ Բացակայում է համագործակցությունը այլ դպրոցների սովորողների հետ :<br>✓ Սովորողները պասիվ են ինքնուրույն նախաձեռնությունների իրականացման , բազմակարծության դրսևորման և մասնակցային գործունեություն ծավալելու գործընթացներում:<br>✓ Սովորողների ուսումնառության մոտիվացիայի բարձրացում<br>✓ Հավասար հնարավորությունների ապահովում յուրաքանչյուր սովորողի համար |
| ԽՆԴԻՐ | ✓ Դասերը լինեն անհրաժեշտ դիդակտիկ պարագաներով և ՏՀՏ միջոցներով հագեցած<br>✓ Խրախուսել ոչ միայն ուսման մեջ առաջադիմող, այլև առարկայական օլիմպիադաներում, դպրոցական և |

| | |
|---|---|
| | արտադպրոցական միջոցառումներին ակտիվորեն մասնակցող և հաջողություններ ունեցող սովորողներին։<br>✓ Նպաստել սովորողների ինքնուրույն նախաձեռնությունների դրսևորմանը, իրենց կարծիքն անկաշկանդ արտահայտելուն,ինչպես նաև տարբեր իրավիճակներում մասնակցային գործունեություն ցուցաբերելուն |
| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաներով դասասենյակների կահավորում<br>✓ տարաբնույթ միջդպրոցական հանդիպումների, միջոցառումների և մրցաշարերի կազմակերպում<br>✓ սովորողների մեդիագրագիտության բարձրացում<br>✓ հանդիպումների կազմակերպում համայնքի ղեկավարների կամ համայնքային այլ ներկայացուցիչների հետ<br>✓ զրույցների, քննարկումների, հանդիպումների կազմակերպում, որոնք կնպաստեն սովորողների ազատ կարծիք հայտնելուն կամ մասնակցային գործողություններ ծավալելուն |
| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՌԻՍԿԵՐ |
| ✓ Ինքնուրույն նախաձեռնությունների և միջոցառումների իրականացում<br>✓ Լրացուցիչ աշխատանքների իրականացում/ խմբակներ, նախագծեր, միջոցառումներ/խրախուսման | ✓ աշխարհագրական ծայրամասային դիրքը<br>✓ թույլ համագործակցություն<br>*ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ*<br>✓ համայնքի տարբեր դպրոցների հետ |

| | |
|---|---|
| մեխանիզմների ապահովում | սովորողների միջև ակտիվ փոխհամագործակցության կազմակերպում<br>✓ մշակութային միջոցառումներին սովորողների հնարավորինս ակտիվ մասնակցության ապահովում |
| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ✓ Բարձրացնել սովորողների մեդիագրագիտությունը<br>✓ Ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունը դպրոցական և արտադպրոցական միջոցառումներին<br>✓ Խրախուսել առարկայական օլիմպիադաներում հաջողություններ արձանագրած սովորողներին<br>✓ Սովորողներին ընդգրկել հասարակական ակտիվությունը խթանող, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը նպաստող ծրագրերին նախաձեռնողականությունը և բազմակարծությունը: |
| ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ✓ Տնօրեն<br>✓ Տնօրենի տեղակալ<br>✓ ՄԿԱ համակարգող<br>✓ ԴԱՀ<br>✓ Դասղեկներ<br>✓ ՈՒսուցիչներ |
| ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | 2024-2029թթ. |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | ✓ Սովորողների ուսումնառության |

| | |
|---|---|
| | մոտիվացիայի խթանում<br>✓ Առաջադիմության որակի բարձրացում<br>✓ Սովորողների գիտակցության բարձրացում<br>✓ Սովորողների շրջանում առավել ինքնուրույնության,նախաձեռնողականության և բազմակարծության ձևավորում |
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | Սովորողների առաջադիմության արդյունքների բարձրացում<br>✓ արդյունքները բարձրացել են 50%,/2/<br>✓ արդյունքները բարձրացել են 25%,/1/<br>✓ արդյունքները չեն բարձրացել /0/<br><br>Առարկայական օլիմպիադաներին մասնակից աշակերտների թվի ավելացում<br>✓ առնվազն 8 աշակերտ մասնակցել է մարզային կամ հանրապետական փուլերին /2/<br>✓ առնվազն 4 աշակերտ մասնակցել է մարզային կամ հանրապետական փուլերին /1/<br>✓ ոչ մի աշակերտ չի մասնակցել մարզային կամ հանրապետական փուլերին /0/<br><br>Սովորողները դարձել են ավելի նախաձեռնող `<br>✓ կայացրել են նպաստավոր որոշումներ և իրագործել են /2/<br>✓ կայացրել են որոշումներ, սակայն չեն իրագործել /1/<br>✓ չեն կայացրել ոչ մի որոշում /0/ |

## 2.2 Դպրոցի անձնակազմը

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

- տնօրեն 1,
- վարչատնտեսական համակարգող 1,
- տնօրենի տեղակալ 1,
- մասնագիտացված կրթական աջակցությունների գծով համակարգող 1:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

**ՈւՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ 33՝**

Տարակարգ ունեցող ուսուցիչներ 4

Կամավոր ատեստավորված ուսուցիչներ 4

Վերապատրաստում անցած ուսուցիչներ 33

Վերապատրաստող ուսուցիչներ 2

Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ 3

Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ 34

Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող 1

Զինղեկ 1

Հոգեբան 1

Լաբորանտ 1

Գրադարանավար/ուսուցիչ 1

Ուսուցչի օգնական 3

ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Հաշվապահ 1

Անձնակազմի կառավարման մասնագետ/ուսուցիչ 1

Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ/ուսուցիչ 1

Խոհարար 4

Հավաքարար 4

Պահակ 4

**Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ վերջին երեք ուստարիների համար**

| Ցուցանիշը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | **35** | **34** | **42** |
| Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը | **14.2** | **15.2** | **18.2** |

**Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ երկու ուստարիների համար**

| Ուսուցիչների թիվը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | - | - | 2 |
| 31-ից 40 տարեկան | 16 | 14 | 15 |
| 41-ից 50 տարեկան | 8 | 8 | 6 |
| 51-ից 55 տարեկան | 3 | 1 | 4 |
| 56 տարեկան և ավելի | 9 | 11 | 6 |

**Դպրոցում գործում է 4 մեթոդմիավորումներ**

Բնագիտական առարկաների մ/մ - 7 ուսուցիչ

Մաթեմատիկական և տեխնիկական առարկաների մ/մ – 7 ուսուցիչ

Պատմաբանասիրական առարկաների մ/մ – 11 ուսուցիչ

Տարրական կրթության մ/մ – 9 ուսուցիչ

**Դպրոցի բոլոր մեթոդական միավորումները իրենց նիստերում կատարում են՝**

●ուսումնական ծրագրերի, դասագրքերի, նոր չափորոշիչների քննարկում

●մեթոդական զեկույցների և դասալսումների քննարկումներ

●սկսնակ և երիտասարդ ուսուցիչների մեթոդական պատրաստվածության բարձրացմանն ուղղված խնդիրների քննարկում

●փորձի փոխանակում

●առարկայական ծրագրերի կատարողականի ստուգում

●առաջադիմության որակի բարձրացման խնդիրների քննարկում

●ԿԱՊԿ սովորողների հետ կապված անելիքնեի քննարկում

Ուսուցիչներն աչքի են ընկնում իրենց կարողություններով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Դպրոցի բոլոր ուսուցիչներն ՀՀԿԳՄՍ նախարարության, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, EduArmenia-ի կազմակերպած վերապատրաստումներին և վեբինարներին՝ կատարելագործելով իրենց ՏՀՏ հմտությունները, կարողանում են դրան արդյունավետ կիրառել դասապրոցեսի ընթացքում: Դպրոցը համագործակցում է «E-school»կրթական կայքի հետ: ՈՒսուցիչների մեծամասնությունը հմտորեն կիրառում է MS Teams և այլընտրանքային այլ հեռավար հարթակներ իրենց բոլոր հնարավորություններով, հմտորեն օգտվում առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից, նաև իրենք են ստեղծում ռեսուրսներ: Մասնագիտական որակների և մեթոդական հմտությունների զարգացումն ապահովելու նպատակով ուսուցիչները մշտապես մասնակցում են տարբեր վերապատրաստումների, ծրագրերի, նախագծերի.

ՏՀՏ վերապատրաստումներ

մեդիագրագիտությանը առնչվող սեմինարներ և նախագծային աշխատանքներ

մեթոդական սեմինարներ

նախագծային այլ աշխատանքներ

վերապասրաստող ուսուցիչների վերապատրաստումներ

Ակտիվորեն մասնակցում են կրթական տարբեր ծրագրերին:

## ՌԻՍՈՒՑՉԱԿՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Ուսուցիչները պարբերաբար մասնակցում են մասնագիտական որակավորումների բարձրացման համար կազմակերպվող սեմինարների, վեբինարների և ունեն համապատասխան վկայականներ, հավաստագրեր։<br>Դպրոցում հնարավորության սահմաններում ապահովվում է յուրաքանչյուր մանկավարժի համար հարմարավետ ստեղծագործական միջավայր։<br>Բոլոր մանկավարժներն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն։<br>Մանկավարժները դասապրոցեսում կիրառում են ՏՀՏ միջոցներ։<br>Կազմակերպում են տարաբնույթ միջոցառումներ, այցելություններ ։<br>Սովորողներին ընդգրկել են ՆորԱրար կրթական ՀԿ-ի կողմից իրականացվող «Օգնի՛ր կարդալ» ծրագրին։ | Ցածր է մոտիվացիան կամավոր ատեստավորման նկատմամբ։<br>Նոր չափորոշիչներին դեռևս չեն տիրապետում։<br>Դասապրոցեսին դիդակտիկ պարագաներ քիչ են կիրառվում։<br>Ուսուցիչների խրախուսման սահմանափակ հնարավորություններ։<br>Լաբորատորիաների, մասնագիտական դասասենյակների և դիդակտիկ պարագաների պակաս։<br>Բացակայում է համագործակցությունը այլ դպրոցների ուսուցիչների հետ ։ |
| **ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>Ինքնուրույն, ստեղծագործ նախաձեռնությունների և միջոցառումների իրականացում<br>Խրախուսման մեխանիզմների իրականացում<br>Ուսումնական գործընթացին առավել ակտիվ | **ՌԻՍԿԵՐ**<br>Ֆինանսական միջոցներ<br>Ուսումնական ծրագրերին մասնակցության անհնարինություն |

| | |
|---|---|
| ներգրավածության ապահովում | |
| **ՆՊԱՏԱԿ** | Մանկավարժական համակազմի որակական և մասնագիտական կարողունակությունների բարելավում<br>Մրցունակ և մոտիվացված ուսուցչական անձնակազմի ձևավորում: |
| **ԽՆԴԻՐ** | ● դպրոցում մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պատշաճ պայմանների ապահովում<br>●կահավորված և դիդակտիկ պարագաներով հագեցած դասասենյակների ստեղծում<br>●ուսուցիչների խրախուսուան մեխանիզմների կարարելագործում |
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | Խթանել ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստումներին, տարաբնույթ մրցույթներին, սեմինարներին, «Լավագույն ուսուցիչ» մրցույթին, կամավոր ատեստավորման և ուսուցչի տարակարգի շնորհման գործընթացներին<br>Ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների համար ստեղծել և ներդպրոցական , և արտադպրոցական ակտիվ համագործակցային և մրցակցային միջավայր<br>Խրախուսել ուսուցիչների ինքնակրթությունը<br>Դպրոցում ապահովել ստեղծագործական առողջ բարոյահոգեբանական միջավայր<br>Իրականացնել ուսուցիչների տարաբնույթ |

| | |
|---|---|
| | խրախուսումներ: |
| ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | Տնօրեն<br>Տնօրենի տեղակալ<br>ՄԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ<br>ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ<br>Մանկավարժական խորհուրդ |
| ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | 2024-2029թթ. |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Ժամանակակակից պահանջներին համապատասխան արդյունավետ դասերի իրականացում և, հետևաբար, կրթության որակի բարձրացում<br>ՀՊՉ-ի նոր պահանջների տիրապետում և նպատակային իրագործում<br>Առողջ մրցակցային պայմանների և միմյանց նկատմամբ հարգալից և փոխադարձ օգնության պատրաստ մանկավարժական կոլեկտիվի և միջավայրի ձևավորում |
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | Կամավոր ատեստավորված ուսուցիչների թիվը `<br>●ավելացել է առնվազն 8-ով /2/<br>●ավելացել է առնվազն 4-ով /1/<br>●չի ավելացել /0/<br><br>Ուսուցիչների մասնագիտական ձեռքբերումները ավելացել են<br>●տարակարգ ունեցող և վերապատրաստող ուսուցիչների թիվը ավելացել  է առնվազն 8-ով/2/ |

| | |
|---|---|
| | ●տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը ավելացել է առնվազն 4-ով/1միավոր/<br>●տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը չի ավելացել է /0/ |

## 3. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Հանրակրթության որակի ապահովման կարևոր երաշխիքներից մեկը ուսուցչի արժևորված և գնահատված լինելն է: Այդ գործընթացի ճիշտ կազմակերպումը ոչ միայն կնպաստի ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացմանը, այլև կխթանի լավագույն մասնագետների մուտքը դպրոց :

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
